ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ—ԹԻՒ 10—ՇԱԲԱԹ—30 ՆՈՅԵՄԲԵՐ 1857

# ՄՈՒՍԱՅՔ ՄԱՍԵԱՑ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԹԱՏԵՐԱԿԱՆ



Այս խաղերուն թէ՛ հրատարակութեան և թէ՛ ներկայացման իրաւունքը Հեղինակը իրեն կը պահէ։
Հեղինակին ստորագրած որ և իցէ նամակ Մէրճանեան Մարգարեան յորդոր Գ. Յարութիւնեանի գրատունը խրկուելու է։

Տարեկան գինն է կանխիկ 60 դահեկան
Վեցամսեայ » » 35 »
Ամէն մէկ թիւը զատ զատ 80 փարա
Գաւառ երթալիք թերթերուն ծախքերուն ծախքը ստորագրողին վրայ է։
Այս շաբաթաթերթը ամէն շաբաթ օրերը կը հրատարակուի։

## ԿԵՑՑԷ ՕԳԻՆ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Ո՛վ դուք որոնք Հայկեան զարմիս,
արդ բերկրալից սրտով եւ ձեռք
սրբութեան մեծ սեղանիս
որ պարգեւ է Երկնից մեզ։

Տեսէք զՄեծն այն երկնատուր
զՄեծն Մասիս—Արարատն,
զի ազգ վերօք ծիրանի արդ
ջրոյ ծիածան ՚ի ձեռին։

Գութ արծարծել զանձս Հայկեան
հարազատից ձեր գանձուց,
որ միշտ և յար Ազգ մեր հանդէպ
ձեր փարեցի յոյս պայծառ։

* * *

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

### ԹԱՏՐՈՆԱԿԱՆ

Թէպէտ և շաբաթաթերթիս եօթներորդ թուոյն մէջ խոստացեր էի լաւ մը յաջորդել թատրոն մը կանոնելու երկրորդ և երրորդ միջոցները, բայց հիմակու հիմայ այժմս դառնալի ուրիշ ժամանակի մը թողուլ զայն. վասն զի կը յուսամ որ քիչ ատենէն ատեն դիտել տալով՝ այն գործին յաջողութեանը վրայօք բաւական տեղեկութիւններ յարգոյ ընթերցողաց հաղորդելու. սակայն առ այժմ յարմար սեպեցի այն բաղդաւորութիւնները ալ, այն տեղեկութեանց հետ միասին հրատարակելու։

## ԽԵԼՔԻ ԺԱՌԱՆԳԵԱՆ ԵՒ

### ՍՏԱԿ ՎԱՏՆԵԼՈՒ

### ՓՈՒՐՁԻ ՄԻՋՈՑ ՄԸ

Իմ սիրելի ընթերցողս՝ խելք, ժամանակ և ստակ վատնելու գիւղին միջոց մը ցուցնելու սաստ, կ'ուզեմ ներկայացնել սանոնց ամենուն մէկ տեսարան մը՝ որուն ես ալ ականատես եղած եմ։

Բարեկամներէս երեւելի ազնուականներէ մէկը՝ անցեալ շաբաթ (որ էր Նոյ՛ 21) երեկոյան ժամ բարեկամներէս մէկուն թեթեւցութեանը առթիւ որոշածս Լէյլի—Մաջնունի ծանօթներուս քովերը մտնելու մէկ երկաթոյ սուրճ մը խմելու համար. որ՝ կ'ըսեմ թէ, Հօրին աչքի առջեւ կը դիտուէին. որոնց ամէն մէկուն վերայ զուարթութեամբ կը փայլէր. «Այս տեսնես, իմ բարեկամս, սա անիծեալ նարօտ ծխամորճը խմելու երեւակայութեան կողմերուն, խմալով, խաղալով, և ծնուածներ շարժելով կը քաշէ մեծ կերպներ կը ըսուին». «Այո, բաւ բարեկամս, կ'երեւայ թէ ատոր թիւ չէ խմեցեր, թէ ինչ գիւղացիներու զարմանք մնացած է որպէս».

Բարեկամս այս կարճ խօսքը դարձուցած թէ երեք փայլեցանի չափ խօսելէն. միշտ անոր ձեռքը բռնելով, «Ասած խօսքս անտես չէ բարեկամ, բոլ երեն, բայց անանկ երեւելի իմ, որ այդ ծխողներն չէ թէ իր դիրքը անունին ձեւը ըլլալը չէ խմցեր, այլ կարելի է որ իր բոլոր կեանքը մէջ պզտիկ ամենափոքր խորհրդածութիւն մը ընելու ժամանակ չէ ունեցած»։ «Ժամանակ չէ ունեցած...» բսաւ բարեկամս, զարմանալով. «Ինչ ունէր որ ծխողին մըն է. մինչև իր անդարձ փոխվանդ կամ եօթնամսեան տարիներուն մէջ գտնէ ժամ մը չգտաւ խորհելու, թէ ամէն որ մարդս պէտք գերեզման, և գերեզմանը շէնք սնանելը կ'արժէ»։

Բարեկամս այս խօսքը լմնցուցածին պէս՝ անդամ մը վերջինելով ծխողներուն անկէց աղօթենք. և վերջը դուրսը ասելին կանչելով՝ ձեռ դրուեցի թէ ինչ խորհրդածութեան մէջ ընկղմեցաւ. ես ալ տեսնելով իր լռութիւնը՝ մեկին սկսայ հետեւեալ խորհրդածութիւնը ընելու։

Ինչ է մարդը.— Եթէ մի ամեն կերպով բոլոր արարածներուն գերագոյնը, և Աստուծոյ Արարչին մտաւոր նկարագիրը պատճառուած տառակեայ մը. որոշած մը՝ որ իր մարմնոյ բարոյական կարողութեամբը և Աստուծոյ կարողութեամբը աղաւաղում եղած է. և հետեւաբար՝ յայտ բարինի, մտաւորապէս սրտակցին, եւայլն, որպէսզի խոհական կարողութեամբ զարդարուած. այս ուրիշ՝ մարդս ինքն համար այս երկնաւորի և նիւթեղէն մարմին կարգաւորութեանց բաւ արժանաւոր գործածելը։ Ինքն, կը հարցնեմ, մարդս իրեն ազատութեան և միջնամարդու ձանձրացեալ և անանց վրայ աւելի ազատարարութիւն ընելու կարող ըլլալին վերջը՝ առաւելին մեր սիրածնոց մէջ կ'ենայ. Ինքն, կը հարցնեմ, մարդս ազնիւ բանակներուն մէջ մարմնոյն և թէ հոգւոյն միսակարգ բոլոր գիտութեան վերջը՝ առաւելին եւ չկենար զանոնք իր կարծածին վրայ դրսեւելու։ Մինչ, բնաւ չի խորհիր, որ այս իր բոլոր ընկերութեան վերջը չառ մը գերեզման ինչէ, գուշակով Աստուծոյ բարութեան ենթակայ կ'ըլլայ։

Բայց մինչ երբ մարդս նման բարոյական տառապանքները այս տեսակ պարզէն և բաւական կեանք մը սիրով փարեն. մինչև երբ ժամանակ չունի անձնական իրենց բաւած ընթացքին վերանորոգութեան ըլլալու վրայ խորհելու. մինչև երբ խելք սիրով չունենան մարդ ըլլալնին ձանձրանալու։ Բայց մինչև երբ ալ իրենց մասնաւոր սիրտ առնենան իրենց խաւարայն վիճակաւորները լեզուելու, իրենց անձնական արդարախնդրական օգը ձգելու, և պարզապէս յեղաշրջութիւնները ժամանակին լուսաւորելու։

Այս երեւելի կարճ խորհրդածութիւնս համար թէ լմնցուցած էի, յանկարծ բաժակներին գաւթին ներս ներսուհան երկսատարդ մը ծառայ. որուն գլխուն դժբախտութիւնը, գլխուն ձեր, ասպանդրան վառելուն երեւոյթը, և միշտ բուրումները պարզապէս կը յայտնէին, թէ կատարեալ յաւելորդութեան անդի երկելի մեծ մը ըլլալը. բայց ցաւալի է ըսելը, որ յիշեալ երիտասարդը հազիւ հազ ծերունի մը գլուխը անցած, տեղացին ապառաջինեցին երկարը երեսը մեկնոց քովը փակեցին. որն որ կ'ապացուցանէր, թէ այն իրենց յանձնարարներէն մէկն է. Երիտասարդը իր պաշտօնի ընդունելութիւն մը գտնելուն վրայ հպարտացած՝ մեկէն հրամայեց, որ շէշ մը պարոնչոր բերեն. որուն հրամանը անմիջապէս կատարուեցաւ. Աչքերով անիծ բանի մը փայլեցնելէն վերջը ձեր ստացերով՝ իր գեղեցիկ գլխէն վրայ կարծրութիւն մը պառեց, և իր կարմիր սրբուներովը մտած չոր կողմէ դառնալ. որով յայտնի կ'ընէր, թէ ընկեր մը կը փնտռէ....

Այս միջոցիս բարեկամս իր խորհրդածութենէն դադրած ըլլալով՝ զուարթ մեր վերջացաւ, և առաջարկեց ինծի որ անկից երթանք. Ես ալ իմ կողմանէս իր առաջարկութիւնը ընդունելով «Այո, երթանք ասկից բարեկամ, բսի, այո, երթանք, և հեռանանք այս ցաւալի տեսարանէն. ինչու որ աւելի այս է ան տեղը՝ ուր մարդիկ բաղդաւորութեամբ կը ջնջեն խելքերնին, ժամանակնին և ստակնին վատնելու»։

Այս նշմարուելու շատ խելացութեամբ պատած են մարդիկ այս հրաշքը. որով շատ գիտութեամբ կրնան կազմակել իրենց նման մարդոց՝ բնաւ թէ ան անանկ պատճառներ վաղ-

Բայց մինչ երբ մարդս նման բարոյական

րելէն վերջը՝ մեր մէջէն երեք հոգի նոյն գիւղը երթալու են, և Թօմասը անտառի մը մէջ կամ ուրիշ ո՛ր և իցէ տեղ մը ձեռք ձգելով՝ տանելու են զինքը մեր բարեկամ աւազակապետին, որն որ նոյն գիւղէն քանի մը մղոն հեռու անտառի մը մէջ կը բնակի. պատուիրելով իրեն, որ ամենայն զգուշութեամբ պահէ զինքը մինչև որ իրեն իմաց տանք որ արձակէ. այսպէսի կերպով Թօմասը իր սիրուհիէն հեռացընելէն վերջը՝ մէջերնուս մէկը յիշեալ նամակը տանելով Կատարինէի դրանը առջին ձգելու է: Կատարինէն այն նամակը կարդալով՝ անշուշտ պիտի մոռնայ իւր սիրելին քիչ ատենէն. մենք ալ այն ժամանակը այս երիտասարդիս մօրը կ'իմացընենք, որ եթէ յիշեալ օրիորդը իւր զաւկին կնութեան առնէ, կատարելապէս պիտի առողջանայ. ահաւասիկ իմ տալու խորհուրդս:

Նարճէզ. Կեցցէ: Երկրորդը առջինէն լաւ միջոց. ուրեմն երթանք: (Կ'երթան)

## ՏԵՍԱՐԱՆ ԺԵ

ԵՂԻՍԱԲԷԹ ԵՒ ՀՈՄՍ.

Եղիսաբէթ. Ի՞նչպէս ես ո՛րդեակ իմ. կը յուսամ որ բաւական առողջացար:

Հոմս.
Լռէ՛, ո՛վ անօրէն...
ալ բաւական է...
մի ծակեր իմ եղկելի սիրտս քու թունալից խօսքերովդ...
ո՛րչափ կուրցած են քու սրտիդ աչուրները...
չե՞ս տեսներ այս սրտիս մէջ յուզեալ Ովկիանոսին սոսկալի ալիքները...
ա՛հ, անիծեալ օր ծննդեանս...
քու հետդ մէկտեղ ծնաւ հոգւոյս մէջ Լաբիւրինթոս մը...
որ օր օր կը մեծնայ և կ'ընդարձակի իմ անհամար թշուառութիւններս իր մէջը պարունակելու համար:
Նրբանկատ հեռադիտակ մը պէտք է, անգութ մայր, որ կարող ըլլաս սրտիս թշուառութեանը մէկ հազարերորդը տեսնելու...
լռէ՛ ալ, կ'աղաչեմ...
դադրեցո՛ւր քու լեզուդ...
մի թափեր եղկելւոյս գլխուն վրայ դառն նախատանաց կայծակներ...
ալ բաւական է...
դադրեցո՛ւր քու սրածայր նետերդ...
բնաւ ողջ տեղ չմնաց այս սրտիս վրայ ուրիշ խոցեր ալ ընդունելու...
ա՛հ...
անոր ամէն կողմը անբուժելի խոցերով լի է...
աւա՜ղ իմ երիտասարդութեանս...
եղո՛ւկ իմ անցլին օրերուս...
խղճա՛ իմ վրաս քարասիրտ մայր...
տե՛ս իմ անտանելի վիճակս...
ձգէ՛ զիս կ'ըսեմ...
կ'աղաչեմ, կը պաղատիմ...
ձգէ՛ զիս որ միտքս դրածս կատարեմ...
մնացի՛ր յաւիտեան քու զաւկիդ...
քու լեզուդ՝ որ կը համարձակի հիմայ զաւակ մը ունիմ ըսելու, զաւակ մը ունէի թո՛ղ ըսէ... աչուրներդ՝ որ հիմայ զիս կը տեսնեն, թո՛ղ իմ ցուրտ գերեզմանիս վրայ քանի մը կաթիլ ջերմ արտասուքներ թափեն...
վերստին կ'ըսեմ, ալ մնացի՛ր զիս յաւիտեան...
ո՛վ իմ ազգականներս, և բարեկամներս, Հոմս անունով երիտասարդ ազգական մը կամ բարեկամ մը ունէինք ըսէք...
կը հարցընեմ ձեզ, իմ երջանկանալս չէ՞ք ուզեր...
ուրեմն ձգեցէք զիս, կ'աղաչեմ...
ձգեցէք, որ յաւիտենականութեան անմատչելի պարսպին անդին կողմը անցնիմ...
հոն երջանկութիւն պատրաստ է անշուշտ ինծի համար...
հոն թո՛ղ անցնիմ ես զքեզ մոռնալու...
հոն թո՛ղ անցնիմ...
ազատիմ ալ զիս խեղդամահ ընող մելամաղձոտութենէն...
ալ բաւական է...
չեմ կրնար դիմանալ...

Եղիսաբէթ. Ա՜հ, զաւակս...
ի՞նչու այդչափ կը փախչիս...
հոն երթալու...
մի՞թէ կ'ուզե՞ս ձգել քու մայրդ...
հոս անմխիթար...

Հոմս. Բայց իմ Կատարինս հոն է...
ես Կատարինը միայն կը սիրեմ...
պէտք է որ իրեն եղած տեղը երթամ...
չեմ խորհիր ուրիշ մէկու մը վրայ...
ա՛հ...
իմ աչուրներս տեսան...
երբ Կատարինս երկու հրեշտակաց թևերուն վրայ նստած երկինք կը բարձրանար...
ես տեսայ զինքը...
ան յայտնեց ինծի թէ միշտ իւր ետևէն երթալուս կ'սպասէ...
արդ ձգէ՛ զիս...
մա՛յր իմ...
գթա՛ եղկելւոյս վրայ...
ա՛հ, մա՛յր իմ...
ձգէ՛ զիս...
ալ չեմ կրնար դիմանալ...

( արտասանելով մօրը վրայ կ'իյնայ. և Եղիսաբէթ սրտին դառն վշտացը սաստկութենէն գլուխը իր զաւկին վրայ կը ծռէ ):

( Պետոյ Չարանեան )

## ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Օր մը Ամերիկացի մը Անգղիացիի մը հետ տեսութիւն ընելու ատեն՝ իր երկիրը ամէն կերպով գովելէն վերջը ըսաւ. “Մինչև անգամ խաւար սենեակներ կան՝ ուր մենամարտութիւն կ'ըլլայ„: “Այդ անկարելի բան է„ պատասխանեց Անգղիացին: “Բայց ես աչքովս տեսած եմ„ ըսաւ Ամերիկացին ոտքը գետինը զարնելով:

“Ան որ այսօր կրնաս ընել, վաղուան մի՛ թողուր„ կ'ըսէ մայր մը իր տղուն: “Ուրեմն շատ աղէկ կ'ըլլայ որ վաղուան համար պատրաստած կարկանդակդ այսօր ուտեմ„ կը պատասխանէ տղան անտարբեր կերպով մը:

Սուտ է, սուտ, կ'ըսէր մէկը, պարոն Ա. չկրնար մեռնիլ. ահա քսանևվեցերորդ անգամն է որ կը լսեմ թէ մեռած է. ասկէց վերջը մինչև որ իր բերնէն չլսեմ, չեմ հաւատար:

## ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

Արդէն յայտնի է որ Մասիս պատուական լրագրոյն 294երորդ թուոյն մէջ ծանուցեր էինք, թէ մեծ պատիւ կը համարինք տեսութիւն ընել այնպիսի երիտասարդաց հետ՝ որոնք ճաշակ, ընդունակութիւն և փափաք ունին թատրախօսութեան, և զանոնք հրաւիրած էինք Բէպէձի–խանը, թիւ 7 երորդ Յարգոյ. Պ. Անտօնին սենեակը, որուն պատճառը դեռ մասնաւոր գրասենեակ մը չունենալնիս էր. ուստի՝ կ'իմացընենք հիմայ, որ ասկէ վերջը՝ թատրախօսութեան փափաք և ընդունակութիւն ունեցողները պատրաստ ենք ընդունելու ամենայն յօժարութեամբ մեր գրասենեակը:

Նա և՝ մեր գրասենեակին մէջ Հայերէն, Գաղղիարէն և Անգղիարէն լեզուաց, Թուաբանութեան, Ընդհանուր պատմութեան, և մէկ քանի ուրիշ ուսմանց դասատուութիւն ալ պիտի ըլլայ. ուզողը կրնայ գալ և մեզի հետ խօսակցիլ:

Կը խնդրենք մեր յարգոյ բաժանորդներէն անոնցմէ՝ որոնք ստորագրուած ըլլալով դեռ շաբաթաթերթիս գինը չեն վճարած, որ իրենց որոշեալ տեղը չգտնուած ատենները՝ ստակը հոն գտնուողներէն մէկուն յանձնելու բարեհաճին:

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ստորագրութեան գլխաւոր տեղերն են առայժմ
Կոստանդնուպօլիս Վէզիր–Խանը Շաբաթաթերթիս գրասենեակը. երկրորդ դստիկոնը. թիւ 15:
Միջիան–Չարշըսին Մարգարեան յարգոյ Պ. Յարութիւնին գրատունը:
Վէզիր–Խանին դրանը քով գրավաճառ Սարհատեան Պ. Մարտիրոսին խանութը:
Մէյ–Նոր–Խանը. Մեծմեծայր Հավատոյ Լրագրոյն գրասենեակը Յարգոյ Պ. Եօրկէին յետոյ...
Պէրա. Բաղչէ–Օրթամբալ փողոցը: Թիւ 2:
Վիօլէր Ֆրէրէ գրատունը:
Կալաթա–Սարայէն դիմացը՝ Մ. Ոսկեան գաղղիացի գրավաճառին գրատունը:
Ըսկիւտար. Ընթերցասիրաց ընկերութեան թանգարանը:
Օրթագիւղ. Արշալոյս Արարատեան գրասենեակը:
Հալէպ. Մեծարգոյ Պէրպէրեան Ստեփանոսի Յովհաննէս Աղային վաճառատունը:

ՀԵՂԻՆԱԿ ԳՈՐԾՈՑՍ. Ա. Հ. ՃԻՉՄԷՃԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՎԷԶԻՐ–ԽԱՆ